

Աշոտ Գագիկի Մանուչարյան
Պալում. զիկ. թեկնածու

ՄՈՒՂՆԻՆ՝ ՊՌՈՇՅԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՎԱԿԱՆ ՏԻՐՈՒՅԹ*

Աշտարակի Մուղնու ս. Գևորգ վանքը պատկանում է Հայաստանի միջնադարյան այն հուշարձանների թվին, որը համակողմանիորեն ու հանգամանալից կերպով ուսումնասիրվել է թե՛ ճարտարապետական¹, թե՛ պատմագիտական², թե՛ վիմագրագիտական³ առումներով։ Կառույցն իր հորինվածքային մտահղացմամբ ու կատարողական բարձր արվեստով արժանացել է ոչ միայն հայ, այլև օտարազգի հետազոտողների ուշադրությանը⁴։

Սակայն, եթե Արագածոտնի մարզում վիմագրագիտական-հավաքչական աշխատանքներ կատարելու ընթացքում այցելեցինք Մուղնի և նախկինում հրատարակված վիմագրական նյութը տեղում համեմատեցինք բնագրերի հետ, վանքի բակում խնամքով պահպանվող բազմաթիվ արձանագիր բնելորներից մեր ուշադրությունը գրավեցին հատկապես երկուսը, ինչպես նաև մեկ համառոտ հիշատակագրություն, որոնք իրենց մեջ նոր տեղեկություններ են պարունակում։ Թեկուզ մեկ բառից կամ մի քանի տասից կազմված փոքր, բերի և ոչ ամբողջական այդ արձանագրությունների աղբյուրագիտական արժեքը կարևորել է դեռևս հայ վիմագրագիտության երախտավոր Հ.Օրբելին⁵։ Երեք արձանագիր բնելորներից առաջինը գորշավուն քարի վրա երկու տողանոց հետևյալ արձանագրությունն է.



Լուսանկար

*Հողվածն ընդունվել է տպագրության 25.12.2012:

¹ Ավելի մանրամասն տես Ս.Ս. Հասրաթյան, Մուղնու վանքի ճարտարապետական համալիրը, «Հայկական արվեստ», Եր., 1984, էջ 36-46։

² Տես Կ.Ա. Մաթևոսյան, Մուղնու ս. Գևորգ վանքը, Եր., 2000։ Տես նաև նույնի Մուղնու ս. Գևորգ վանքը, ս. Էջմիածին, 2009։

³ Տես Յ. Եղիազարյան, Մուղնու վանքը և նրա վիմագիր արձանագրությունները, «Էջմիածին», 1960, № 7, էջ 32-37։ Տես նաև Ս. Ս. Սաղումյան, Մուղնու ս. Գևորգ Եկեղեցին և նրա վիմագրերը, «Էջմիածին», 1977, № 1, էջ 46-54։ Տես նաև նույնի՝ «Աշտարակ», Եր., 1999։

⁴ Տես Ս. Ս. Հասրաթյան, նույն տեղում, էջ 36, տողատակ։

⁵ Տես Դիվան հայ վիմագրության, պիտակ I, Անի քաղաք, կազմեց Յ. Ա. Օրբելի, Եր., 1966, էջ XXIII։

Դ (Ժ) դադիվանական բնույթ-մարդկանության պահպանության համար, թիվ 1 (37) հունվար-մարտ 2012

Վել համայնշականի հանդես

ԿԱՐԵՎՅԱՆ ԽԱՆԸՆԱՐՈՅԹ

Գրչագիր⁶

ԿԱՍԱԽ ԱՅ, ԵՄ ԱՄ [ՍԱՌԻՐ, / ՀՐԱՍՏԱՎԻ ԻԾԽԱՆԱՑ
ԻԾԽԱՆԻՆ ԷԱԶՈՅ, ԹԼՈՎԻ...]

Սա ակնհայտորեն իրավական բնույթի վիմագրի հատված է, ինչը հուշում է «ԹՈՂԻ» բառի «Թ» տառի արձանագրված լինելու հանգամանքը, որին պետք է հաջորդած լիներ որևէ հարկատեսակի ապահովության հիշատակությունը:

Էաջի անունով պատմական անձ հայտնի է միայն Պոռշյան տոհմի նշանավոր գործիչ⁷: Էաջի Պոռշյանին «գեղեցկածաղիկ» մակրիրով և «մեծ կողմնակալ» պաշտոնով է հիշատակում Ստեփանոս Օրբելյանը⁸: Էաջիին Պոռշյանների իշխանության ավագության իրավունքն անցել էր 1299 թվականին⁹: Նա 1300 թ. պատրաստել է տվել Խոտակերաց կամ Քարլովի վանքի ս. Նշանի արձարյա, ոսկեզօծ պահարանք՝ հայ միջնադարյան արվեստի լավագույն նմուշներից մեկը¹⁰: Էաջի Պոռշյանը եղել է ժամանակի նշանավոր քաղաքական գործիչներից, քաջ գորապետերից մեկը, որը զոհվել է 1317 թ. դեկտեմբերի 18-ին՝ մեծ սուզ պատճառելով «ամենայն քրիստոնէից»¹¹:

Արդ, հարց է ծագում, ի՞նչ զործ ունի Էաջին Մոլնիում, այն դեպքում, եթե հայտնի է, որ Պոռշյան իշխանական տան ավատական «տիրույթները տարածվում էին Վայոց ձորի արևմտյան մասում, Շահապունիքի, Վարաժնունիքի, Կոտայքի շրջանում, մի մասն էլ՝ Այրարատի նահանգում»¹², նաև Գեղարքունիքի մի հատվածում¹³:

Կարելի է մտածել, որ արձանագրության բեկորը պատահական է հայտնվել Մոլնու եկեղեցու տարածքում։ ինչ-որ ժամանակ ոխտավորներից կամ հավատավորներից մեկն այն մի ինչ-որ վայրից այդտեղ է բերել։ Սակայն այս կարծիքը հերքվում է հաջորդ արձանագրի բեկորով։

6 Գրչագրերն ըստ՝ Արտեն Դարությունյանի:

7 Տես Յ.Աճառյան, Յայոց անձնանունների բառարան, հ. Բ, Եր., 1944, էջ 222:

8 Տես Պատմություն նահանգին Սիսական, արարեալ Ստեփանոսի Օրբելեան արքեախսկոպոսի, Թիֆլիս, 1910, էջ 432:


9 Տես Դայ Ժողովորի պատմություն, ԴՍՍՀ ԳԱ հրատ., հ. III, Եր., 1976, էջ 644:

10 Տես Գարեգին Կարողիկոս Յովսէփեան, Խաղակեանք կամ Պոռշեանք հայոց պատմութեան մէջ, Անքիլաս, 1969, էջ 99-101:

11 Լ.Խաչիկյան, ժԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Եր., 1950, էջ 128:

12 Դայ Ժողովորի պատմություն, հ. III, Եր., 1976, էջ 549: Դիշատակությունը թերի է. չի որոշակիացվում Այրարատ նահանգի էլ ո՞ր մասերում էին դրանք տարածվում, այն դեպքում, եթե Վարաժնունիքն ու Կոտայքը այդ կենտրոնական աշխարհի գավառներն էին կազմում:

13 Տես Գ. Ս. Գրիգորյան, Սյունիքը Օրբելյանների օրոր, Եր., 1981, էջ 89-90:



Լուսանկար

ՄԻՌԱՅ
ՏՅԱԲՀԱՆԱ

Գրչագիր

Բոլորաձև երկարագիր տառատեսակներով այս երկտողը փորագրված է սախտակավոն քարի վրա: Արձանագրության երկրորդ տողում հիշատակված է Ամիր Հասան անունը, իսկ նրանից առաջ՝ չպահպանված բառի «..ԻՆ» վերջին երկու տառերը, որոնք կարող են պատկանել օրինակ՝ «ԻՇԽԱՆԻՆ» բառին: Ամիր Հասանը Պոռշյան տոհմում հանդիպող անուններից է: Պոռշյան իշխանատոհմում Ամիր Հասան անվամբ հայտնի են երկու հոգի՝ Էաջի հայրն ու որդին, այսինքն՝ բոռն անվանակոչված է ի պատիվ պապի: Կարևոր է զանազանել, թե ո՞ր իշխանն է հիշատակված, Ամիր Հասան Ա-ն (1284-1292), թե՝ Ամիր Հասան Բ-ն (1318-1348/51):

Բայց առայժմ մի կողմ բողնելով այս խնդիրը՝ նախ փորձենք բացահայտել Ամիր Հասանի դատեր ինքնությունը: Առաջին տողում «ԳՈՒՍՏՐ» բառին նախորդող անունից պահպանվել է միայն «Ն» տառը՝ «Ս» ստացական հոդի հետ կցագիր:

Պոռշյանների իշխանատոհմում «ն» վերջավորությամբ իգական անվան հանդիպում ենք Պոռշ Խարբակյանի դատեր՝ Գոհար Խարունի պարագայում՝ վախճանված 1268 թ. առաջ¹⁴: Հնարիավոր է Գոհար Խարունի հիշատակի հավերժացումը տոհմակցուիհների հետագա անվանակոչություններում: Բայց մեր վիմագրի վերծանությունում «Խարուն» վերականգնելը բացառվում է, քանի որ բնագրում դատեր անվան պահպանված «ՆՍ» կցագրից առաջ նշմարվում է «Ս» տառի փոքր ստեղը: Հետևապես իշխանությունը անունը վերջանում է «ԱՆՍ» տառաշարով: Դատեր անվան վերականգնման գործում օգնում է Գանձասարի վանքի գավիր հյուսիսային պատի 1309 թ. արձանագրությունը, ըստ որի՝ սուրբ ուխտին ընծայաբերություն կատարող նվիրատուն իրեն կոչում է. «Ես՝ Էսուգանս,

14 Տես Գարեգին կաթողիկոս Յովսէփեան, նույն տեղում, էջ 72:

դրւատը մեծին Ամիր Հասանա...»¹⁵:

Այս հիշատակությունը լուծում է մի շաբք հարցեր: Նախ՝ հայտնի է դառնում Մուղնու արձանագիր բեկորի աղջկա անունը՝ Էսուգան, ապա այն, որ նա դուտրըն է Ամիր Հասան Ա-ի, այսինքն՝ քույրն է Էաչիի, և որ այդ հատվածային վիմագիրը պետք է վերծանվի հետևյալ կերպ:

ԵՍ՝ ԷՍՈՒԳԱ ՆՍ, ԴՈՒՏՍ Ր/ ՄԵԾ ԻՆ

ԱՍԻՐ ՀԱՍԱՆ ՐԱ ...:

«Էսուգան» անունը, մեր կարծիքով, պետք է սոսուգարանվի արար. արմատներով. «Էսու» = «Խսա» = «Հիսուս» (عیسی) և «գան» (قان) «կանոնավորել», այսինքն՝ «Հիսուսով կանոնավորված»: Իսկ Էսուգանի՝ Գանձասարում հայտնվելը պետք է նկատել իշխանությունում նախնյաց բնօրրան այցելություն կատարելու արդյունքը:

Էաչիի և Էսուգանի հայր Ամիր Հասան Ա-ն ներկայիս Գեղարքունիքի մարզի Վարդենիկ գյուղի արևելյան եզրին, գետակի աջ ափին գտնվող Իշխանավանքին մերձակա պատմական գերեզմանոցում Ովասար կազմողի 1290 թ. կանգնեցրած մեծ և գեղաքանդակ խաչքարի արձանագրությունում հիշատակվում է որպես «բարեպաշտ արքա»¹⁶:

Այն, որ Մուղնի երկու արժեքավիր վիճակի վկայությունները պատահական չեն հայտնվել այդտեղ կամ ուխտագնացության արդյունքում, հավաստվում է Էաչիի և Էսուգանի պապ Պոռչ Խաղթակյան (1223-1284) հզորագույն իշխանի արձանագրության առկայությամբ Հովհաննավանքում: Ըստ այդ վիճակի՝ հայոց սպարապետ Պոռչը 1247 թ. Հովհաննավանքին նվիրատվություն է կատարել՝ «Էսու ինչ»՝ ընծայելով խոշոր ունեցվածք, ինչը մակարերվում է սուրբ ուխտի միաբանների խոստացած :ժ: (10) օր պատարագ տարվա մեջ մատուցելու փաստից¹⁷: Հայտնի է, որ միջնադարում ս. պատարագների սահմանվող քանակը կախված էր նվիրատվության արժեքից: Իսկ Հովհաննավանքը հեռու չէ Մուղնուց և հենց այդ նշանավոր մենաստանի միաբաններն են, ինչպես հաղորդում է Զաքարիա պատմիչ Քանաքեռցին, իմանադրել Մուղնու ս. Գևորգ վանքը¹⁸: Մուղնի բառն էլ ժողովրդականորեն ստուգարանվել է որպես Հովհաննավանքի մեկ մղոն՝ «մղոն մի» հեռու գտնվող, այստեղից էլ՝ «մղոն մի» = Մղոնի= Մուղնի¹⁹:

Մուղնու վանքի հիմնադրման ժամանակը հայտնի չէ: Կ. Մաքրեսյանը, հիմնվելով Մուղնի ս. Գևորգ Զորավարի վանքում 1278 թ. և 1280 թ. ընդորինակված ձեռագրերի վրա, եզրակացնում է, որ «Մուղնիում ս. Գևորգ անունով եկեղեցի կար 13-րդ դարի վերջերին, և որ այն հիմնադրվել է 1278 թ. ավելի վաղ... Վանքի բակում և շրջակայքում կան նաև քառակող կոբողների բազմաթիվ բնելորմեր, որոնք 4-5-րդ դարերի հուշարձաններ են»²⁰:

Բացի եկեղեցուց, անշուշտ, եղել է նաև կից շինություն: Դրանց պատերին

15 Դիվան հայ վիճագրության, պրակ V, Արցախ, կազմեց Ս.Գ.Բարխուդարյան, Եր., 1982, էջ 52:

16 Դիվան հայ վիճագրության, պրակ IV, Գեղարքունիք, կազմեց Ս.Գ.Բարխուդարյան, Եր., 1973, էջ 150: Իսկ «քարեպաշտ արքայի» բռն Ամիր Հասան Բ-ի օրոք ծաղկում ապրեց Գևանդորի համալսարանը: Այդ մասին տես՝ Գ. կար. Յովսեփեան, նոյն տեղում, էջ 108:

17 Տես Կ. Ղաֆարարյան, Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, Եր., 1948, էջ 91:

18 Տես «Զաքարիայ սարկաւագի պատմագրություն», հ. III, Կաղարշապատ, 1870, էջ 40-41:

19 Տես Կ. Մաքրեսյան, Մուղնու սուրբ Գևորգ վանքը, Եր., 2009, էջ 9:

20 Կ. Մաքրեսյան, Մուղնու սուրբ Գևորգ վանքը, Եր., 2000, էջ 11:

Էաչին և Էսուգանը թողել են արձանագրություններ, որոնցից այժմ միայն գորշավուն ու սպիտակավուն քեզորներ են պահպանվել:

Կ. Մարտունյանը, վկայակոչելով Առաքել Դավիթեցուն, գրում է, որ վաճահայր, մուղնեցի Մարտիրոս Եպիսկոպոսը (1632-1655) ամբողջովին քանդել է խարխուկ, հին, փոքրիկ աղոթարանը՝ փոխարենը կառուցելով քառասյուն վայելու եկեղեցի և պարսպապատել տարածքը²¹: Այստեղից էլ, հնարավոր է, անհետացել են Պոռշյանների արձանագրությունները, կամ էլ վերաշարվել են պատերի մեջ և չքացել Մարտիրոս Եպիսկոպոսի եղբորորդու՝ Հովհաննես վարդապետի (1609-1669) կողմից սրբատաշ քարերով հիմնարար նորոգության ժամանակ՝ ձեռամբ նշանավոր ճարտարապետ Սահակ Հիգանցու և նրա աշակերտ ու փեսա Մուրադի:

Սուլեյման, երևի, Պոռշյան իշխաններին անհրաժեշտ էր որպես հանգրվան՝ անմասն չմնալու Եգիպտոսից, Կիլիկիայից դեպի հեռավոր Կարակորում ձգվող միջազգային առևտրի ճանապարհի անցուղարձից: Բայց Պոռշյանները, որոշ ժամանակ տիրանալով Մուղնի գյուղին, այն օտարել են: 1425 թ. Ազիզբեկի որդի և Գամրիկելի թոռ Զաքարիան գնել է Մուղնի գյուղը²²: Ազիզբեկի կամ Ազիզ բեկի հիշատակությունը՝ ամիր Ազիզ ձևով, առկա է հետևյալ վիմագրում:



Լուսանկար

Ա Զ Շ Ո Ղ Շ
Ա Վ Ւ Ւ Ա Զ
Ւ Զ Ւ Հ
Ա

Գրչագիր

21 Տես նոյն տեղում, էջ 14-25:

22 Տես Կ. Ղաֆարյան, Յովհաննավանքը և նրա արձանագրությունները, էջ 102: Զաքարիան արձանագրության մեջ չի հայտնում, թե ումից է գնել Մուղնի գյուղը:

Ա ԼՍՈՒՄԾ ՈՂ ԼՈՐԾԱԻ / ԱՄԻՐ ԱԶ / ԻՉ ԻՆ /, ԱՍԷՆ:

Վերծանություն

Ազիզ թէկի և Զաքարիայի կապակցությամբ Գարեգին կաթողիկոս Հովսեփյանը գրում է. «Իսկ Զաքարիայի մասին ամենեւին բան չփառենք. թէպէտ մի Զաքարիա, որդի Ազիզը կին յիշում է Յովհաննայ վանքի արձանագրութիւնների մէջ, բայց նա բոռն է Գամրիկէլի, ուստի եւ դժուար է հաստատել, թէ Ազիզը Բ-ի (Եղվարդի տիրոջ-Ա.Ա.) որդին է. Վերջինիս դեպքում պէտք է ընդունել, թէ այստեղ յիշատակուած Գամրիկէլը Վաշուտեաններից էր եւ մօր կողմից Զաքարիայի պապը, որ յիշատակուել է իբրև տեղական իշխան»²³: Բայց նոր տերը Մուղնիում երկար չի տիրել, ընդամենը վեց տարի, քանի որ «1431 թ. Էջմիածնի վանքը տնտեսապես ամրապնդելու և կաթողիկոսական արոռանիստ դարձնելու նպատակով, Սյունյաց իշխան Բեշքեն Օքբելյանի որդի Ռուսամը, որն Խորանդար Կարա-կոյունլու ամենամերձավոր խորհրդականներից էր ու, թերևս, նշանակվել էր Այրարատյան երկրի կողմնապետ, վաճառքի անվան տակ Էջմիածնի վանքին է նվիրում յոթ խոշոր գյուղեր...»²⁴, որոնց թվում էր նաև Մուղնին:

Ուրեմն՝ 1425-1431-ով պէտք է թվագրվի ամիր Ազիզի հիշատակությամբ անրվակիր վիմագիրը:

Այսպիսով, Վերը բերված նորահայտ վիմագրերը կարող են ծառայել իբրև կարևոր սկզբնաղբյուրներ Պոռշյանների իշխանական տիրույթների վերջնական հստակեցման, ինչպես նաև Մուղնու 13-15-րդ դարերի պատմության ուսումնասիրության համար:

Summary

MUGHNI, UNDER THE BROSHYAN REIGN

Ashot Gagik Manucharyan

The newly discovered lithography at the Church of St. Gevorg of Mughni, along with the citations made by Aeachi (Էսչի) and Amir Hasan, prove that in the Middle Ages, particularly in the XIVth century, Mughni was within the reign of the House of the Broshyans. According to a citation at Hovhanavank, Aziz Bek's son, Gamrikel's grandson Zakarya purchased Mughni. On the newly discovered lithography we read the name of Amir Aziz, who, we believe, was the father of Zakarya, Aziz Bek.

23 Գ. կաթ. Յովսեփեան, նշվ. աշխ., էջ 419: Սիմեոն վարդապետ Այրիվանեցու 1444 թ. գրված Յայսմաւուրում իշխանակում են Եղվարդի տեղ Ազիզը Բ-ն ու նրա որդիները՝ Ավազն ու Զաքարիան: Տես նույն տեղում էջ 418, տես նաև Ղ.Ալիշան, Հայապասում, Վենետիկ, 1901, էջ 569:

24 Յայ Ժողովորի պատմություն, հ. IV, ՅՍՍԴ ԳԱ հրատ., Եր., 1972, էջ 39: